

# 2 JULY 3 JULY 4 JULY 5 JULY

# P U B L I C

բաւեցու օգնութեաւութիւն է տալ սպառութիւն

Տարեկան գիր կանխիկ Հունուշ 100

Այս լուսաբարձր ամեն էրկու շաբթի օրերը կը հրաժարագուի :

Պիօջիսէն դուրս գացած Լրագրին իւր Փոստայիս շաբաթը մասնաւոր էր:

1970-1980-1990-2000-2010-2020-2030-2040-2050-2060-2070-2080-2090-20100

#### **Worship**

ՊՕԼԻՍ 8 ՄԱՅԻՍ

Վեծաղօք, տէրսւթեան, բարձրագոյն դուռը  
Եւրոպայի տէրսւթեանց կողմէն կատանդնուպօ-  
լիս գտնաւով գեսպաններուն ծանուցական գիր մը-  
խրկեց . որ տաճկական ճշրտքէ հաշարիս լրագիրը  
հրատարակած ըլլալում մենք ալ հոս թարգմանելլ  
պատշաճ սեպեցինք . որովհետեւ այս ծանուցա-  
կան թուղթիս պարունակածը գիտալը վաճառա-  
կանադ սիրանի բան մին է :

“ Պալսթիայի մաքսարանը բարեկամ տէրուեց  
հպատակներէն պարինեցի անունով խել մը մարդի իրենց անձնական օգտին համար վաճառականներուն մէկ քանիին ապրանքներուն մաքսը բուսցներէնց անուաննը գրել կուտան, և ապրանքը այս կերպով մաքսէն կը հանեն : Այս երեսէն անոնց վրայ խել մը ստուկ կը մնայ, և տառիք խանութի և գրամագլուխի (սէրբայէի) տէր և ինքնագլուխ ծանօթ մարդ քըլարդվին տէրութեան գանձուն վերաբերեալ պոտակը անոնց վրայ անցնի մընալ պատշաճ չէ, ուստի ասիկայ մէկ աղջէկ կարգի մը տակ խօթել հարկ սեպուած է : Անոր համար ասկէց ետքը երբ որ մէկ վաճառականի մը ապրանք մաքսը գալու ըլլայ նէ՝ այն ապրանքին տէրը անձամք մաքսը գալու է . և այս մարդս ամէն կերպով ինձի հաւասարիմ է և ես ասոր վատահ եմ ըսելով կարգադրելու է որ անկէց ետքը իր անունով գալու ապրանքները այն մարդուն յանձնուին

և մաքսին իրաւունքը ինչ որ կորի նէ մաքսին տու-  
մարներուն մէջ այն վաճառականին անունովը դըր-  
վի . և ինքը այն ստակին հաստացումը իւր փա-  
առնելուն հաստատութիւն՝ իւր ձեռագրովը և  
ստորագրութեամբը թուղթ ձգէ . և այս կերպով  
մարդ ցըցունէ : Քանի մը վաճառական գործեր  
նուն դիւրութեանը համար մի և նյոյն մարդը այ-  
կերպով իրենց գործին յատկացնելուն վայ ալ վա-

Համմետ կ ամլիք գրուեցաւ :  
— Վարիլ 22 ին , շաբաթ օրը , Վասդրիսյի տէրութեան կոստանդնուպօլսոյ գետպան Պ. Ռ. գուռմէր կոմալ՝ փառաւոր և մեծածախ հացկեց բայթ մը ըրաւ մեծազօր տէրութեան բարձրաստիճան գործակալներաւն : Հացկերոյթին գտնուող ներն էին մեծ սպարապետ բարձրապատիւ Առաջ համմետ Վալի փաշայն , մեծ թնդանող ասվետ բարձրապատիւ Վհմէտ Ֆէթհի փաշայն . մեծ ծովական կալ բարձրապատիւ Ոիւլէյման փաշայն . տէրութեան խորհրդարանի ատենին նախագահ բարձրապատիւ Ոիփաթ փաշայն . արտաքին գործութեանունը բարձրապատիւ Վալի փաշայն . վաճառականուն և երկրագործութեան հարկաց շնուրածոց տեսուչ բարձրապատիւ Խանյիլ փաշայն . դատարանուն և երկրագործութեան հարկաց շնուրածոց տանապետիւ ( տավիլ նազըրիի ) փոխանորդ մեծապատիւ Շէքիակ էֆէկտին . և բարձրապատիւ փոխարքաքային խորհրդական մեծապատիւ Փուատ է

ՔԵՆՏԻՆ : Բարձրապատճեւ փոխարքայն հինգշաբթի  
օրուընէ ՚ի վեր հիւանդ ըլլալով, այս հացկերսց  
թիս ներկայ չի կրցաւ գտնուիլ: Հացկերսցթին ա  
տենը քանի որ առիթ պատահեցաւ նէ՝ ոմանիեա  
մեծաղօր տէրութեան բարեգութիւնքնակալ կայ  
սերը, և Ասդրիս կայսերը բարերջանիկ կենաց  
համար և երկու կայսերական կառավարութեա  
մէջ սէրը անքականը և մշտնշենաւոր մնալուն հա  
մար բարեմազլժութիւններ եզան:

— Օստար լեզու սորմիլլը՝ այն անծանօթ լեզուին բառերը գոյ ընելավ կ'ըլլայ . և գոյ ընելավ բառնը ոտանաւոր ըլլայ նէ միտք պահելու շատ մեծ օգուտ կ'ընէ : Պարսկերէն սորմիլլու համար տաճկաց դպրատառները այս ձամբան բռնած են . և շահութիւն և թեօլիքիւն վէկայի ըստեած գերբերը՝ ոտանաւորի առնուած բառարաններ են : Այսերէն դրաբար լեզուն ալ ասանկ բառարաններ ունի , մէկ լուսահոգի Պալոսասար պատուելիին չինածը , որ կոստանդնուպօլիս տպուած է նոյն հեղինակին բարեւագիրքին մէջ . և մէկն ալ Վարուգեան լուսահոգի թագէոս վարդապետինը , որ Վատէրիխան արարուած է : Տարձրագոյն գրան թարգմաններէն արժանայսրդ Խալիս էֆէնասին այս խորհրդածութիւնով վառանսրզի լեզուին ուսմունքն ալ դիւրացընելու ձեռք զարկեր է . և այս լեզուին խիստ գործածական բառերը ժողվելով՝ տաճկերէնները այն պէս մը դրեր է առաջնին . որ թեօլիքիւն վէկոտանաւոր բառարան մը կ'ըլլայ : Այս աշխատութիւնը բարեսէր ինքնակալին ալ հաճայ ըլլալով յատուել չնորհ ըրաւ որ այս օգտակար գրքին տպագրութիւնը արքանայարդ հեղինակին յատկանայ ուրիշ մը տպելու իշխանութիւն չունենայ . և շահութիւնը պահպան կ'ընդունայ :

Հը ամբողջ իրեն ըլլաց : Խօսերս Տէրքէի Հայոց  
լրագրին տպարանը պիտի տպուի ասիկայ :  
— Անցեալ կիրակի օրը ապրիլ 30, ժամ 5 ին ա-  
մենները Պէտքաշ հայոց վերին և տարառ-լանձու-  
մէջ առաջ, գիսպուածով կրակ պատահելով մէկ եւ  
կու խանութ այրեցան . գործակիտաց ժրութեա-  
բը շուտով և առանց շատ զնաս տալու կրակը մա-

Վայիս 1. Երկու շաբթիեն երեքշաբթի լուսնա  
լու գիշերը Պէջողլու ուռւռաց գեւապանի ապարանքի  
ետեւի կողմը տաճկաց թաղը նյոնպէս հրդեհ ս  
պատահեցաւ . Երկու երեք ժամ տեւեց, և էփի ս  
զէկ տուներ այրեցան : Ծէպէտ բարձրաստիճա  
պաշտօնատէրեր և ստորին աստիճանի գործակա  
ները ժամանակին հասան և աղլէկ աշխատեցան  
բայց մէկ գիշեն հարաւային հովք, որ թէպէտ սա

տիկ չէր, բայց միշտ բողը դէպ ի ցամաքը կը տոնէր, մէկ գիեն ալ այն տեղերու փողցներուն ներլավ չի ներեց որ ուղարձին չուտավ մարի կրկնէր: Քանի որ ասանկ փորձութիւններ կը պատճի, լայն փողցներուն յարդը աւելի կը ճանցու որովհետեւ ջրմուղ բանեցընելու և ջրկիրներ ըստ բաւականին երթալու գտլու չափ միջոց՝ միալայն փողցներուն մէջ կ'ըլլայ: Չի համրենք լայն փողցներուն մշտնշենաւոր օգուտաները. օդայն համարձակ բանիվը, որով ասանկ փողցներու վրա շինուած տուները առողջ օդ կ'ունենան. և տեղայն վրայ ալ գիտես թէ մէկ աղուոր գեղեցկոթիւն մը կ'երեւի:

Այսն երկուշաբթիէն երեքշաբթի լուսնալու գիշերը կրտսանդնուապօլիս Ո՞ահո-ա ժաշ լուլը ալ Քիւրքձի խանէն քիչ մը վեր կրակ պատահցաւ. փողցին երկու կողմէն քսան և հինգ խնութի չափ այրեցաւ:

— Ապրիլ 17 ին ժամ իննին՝ Զանաք քաղէ մէկ  
շնորհական գույք է տարածել Տէսլա և այլ բարեկարգ աշխատավորութեան առաջարկութեան մէջ:

— Ըերբեմ հավաքածու տաճկական լրագիրը ձեւմա-  
զիւլ ախրդ չէ (ապրիլ 23) հրատարակած թերթին  
մէջ կը գրէ . « Այսից երեք շաբաթ առաջ հրատա-  
րակուած ձերբեմին մէջ՝ Իզմիրէն եկած գրերէն  
առնելով պատուած էր թէ , Իզմիր սրբահած  
շարժէն քանի մը տեղեր փլեր և աւրըշըկեր են -  
Այս անդամ բարձրագույնի Խոլիլ փառային կող-  
մէն եկած գրութիւններուն նայելով՝ դոհութիւն  
Սոտուծոյ , յիշեալ շարժերէն տուն կամ բնակո-  
րան փլչելու պէս վնասներ ամենեւին պատահած  
են եղեր :

— Տեղայս քունիկ անուն գաղղիսական լրագիրը  
ապրիլ 28 ին (16 ին) Խմբիրէն առած նամակից մը  
հետեւեալ տեղեկութիւնները կուտայ : Վարդիկի  
**10** էն (մարտ 28 էն) Ետքք քանի մը անդամ ալ շարժ  
իմացանք, երբեմն սաստիկ և երբեմն թեթեւ .  
բայց բարերազդաբար ասոնց մէկն ալ վնաս մը չե  
տուաւ : Վմէնէն վերջնը եղաւ ապրիլ 19 էն 20  
(7 էն 8) լուսնալու գիշերը, և 20 ին առտուանց :  
Նշանակելու արժանի բան մըն է, որ այս վերջնին  
շարժը մի և նոյն ժամու մէջ Նիմֆի և Աղնիսաւ  
և Քասապու և Պայրնալը և Թիրէ և Վյալն ալ  
իմացուած է : Այս նամակը գրողը կ'երեւի որ այն  
առենք տակաւին լուր առած չէր որ նոյն գիշեր-  
ուան շարժը Ախիսալիք և Քիրմասղը և Աւլու-  
պատ, և Վալենանտ Ծին լեռնակողմը դանուած  
Քարա օղան գիւղը, և Զանաք քալէ և Կատան-  
գրնուալօլիս և Քիւթահիս և ուրիշ տեղեր ալ  
իմացուեր է . բայց է, փոքր Վսիսյի արեւմտեան  
հարաւային կողմը էփ աղէկ ընդարձակ սահման  
ու շահած է :

— Իզմիրու արշավարքին պատուական լը-  
րսագրին ասպրիլ 28 հրատարակած թերթին մ. չը-  
հանեւեալ հասուածը կը կարդամը :

“Պանարտմայէն հետեւեալ լուրը կուտան :

”Այս օրերս Կըմէնի գեղը , (որ Պանարտմայէ դիմացը կ'ընայ ), Պատի օղու Պ. Գրիգորին այդին փորելու ժամանակը գտնուեցաւ մէկ մարմարին մնառակ գերեզման մը , որուն երկայնութիւնը թիւլ (գորգը) չափեցին և լայնութիւնը 12 թիւլ վրայի կափարիչքարին ևս սեպաձեւ մարմարին է Այս մնառուկից մէջ հետեւեալ բաները դանուեցան , 18 հատ մարդու գլուխ՝ չափէն աւելի մեծու խիստ խոշար ականեներով , այսինքն ուղար ակը ունիեռուն նման :

Եկեւ բարոսկ ժամամթուրմած մաս

Նաև թու սսամ է Ոչ կ բարակ զարօնը լավաց սապար լայնութեամբ ոսկի ապարանջան (պիլէցիք) մը, որ  
4 ½ տիրէմ կը կըսէ : Ու եց ապակի ափսէ (թապադ  
բաց կանաչագլուխն) : Ոի և նոյն նիւթէն շինուած  
շիշ (շիշէ) . որոց մէջ մոխրագլոյն փոշի կան : Ասոնց  
արտասուաց շիշէր են կըսեն, զորմնք մեռնովին  
ընտանիքը աչքնին կը բռնեն եղեր հին կրապաշ  
տութեան ժամանակը : Յիշէալ ափսէից մէջ մէկ  
մէկ փայտէ փաքք գուալ գուուած է . այլև խիստ բա  
րակ և նամասկ գոցելու նշանարաց (փուլերու) պէտ  
բոլը ընկի ոսկի թիթեղներ կան . ասոնցմէ ՚ի զատ եր  
կու հատ նոյն բարակութեամբ լուսնաձեւ սկզ  
մանեակ (կէրտանլըդ) : Ասոնց վրան, կամ գերեւո  
մանին ներսը գուրսը գիր կամ նշանագիր չի կայ  
միայն մէկ երկու տեղ ծաղիկի նման նկարներ կ  
տեսնուին :

զը կուգայ, գերեզմանը բացողները բռնել կուտայ, կը նեղէ և բանտը կը դնէ լսելով՝ թէ դուք ասկէց գանձ գտած էք, յայտնեցէք։ Այսպիսն յետայ իւտտէկի տեղակալ (գայմագամ) Ուուստաֆա պէյը գալով, օրինաւոր կերպիւ հարցուփորձ և քննութիւն կ'ընէ, և գիպուածը գրի առնելով, նոյն թուղթը գեղացւոց ստորագրութելը բարձրապատիւ Սարիմ փաշային կըյուղարկէ ՚ի Պրուսա։ և այնուհետեւ բանտէն կը հանէ զխեղչ մարդի կը, որ գերեզմանը գտեր ու բացեր էին։

— Ուումէլիի բանակին սպարապետ բարձրապատ  
տիւ Խօմէր փաշայն տէրութեան մէջիտիւ շոգէնա-  
ւովը ապրիլ 21 ուրբաթ օրը Վառնայէն իւր ըն-  
տանեօքը Կրտտանդնուալիխ եկաւ : Խցին օրը Զը-  
րաղանի կայսերական պալատը գնաց բարեգութ  
կայսերը ներկայացաւ և սիրալիր ընդունելութիւն-  
գտաւ . անկէց ելլէլչն ետքը Շարձրապատիւ փո-  
խարքային և տէրութեան մէծամեծ նախարարաց  
տեսութեան գնաց : Ուումէլիի բանակին զօրաց մե-  
ծագոյն մասը Պօնայի վրայ գացած ըլլալով՝ բարձ-  
րապատիւ Խօմէր փաշայն ալ ասկէց ուղղուիի Պօ-  
նակի կողմբ ախտի երթաւ :

— Ապրիլ 28 (16) Պօսնայի կողմէն առնուած լրտերը՝ այն կրզմերուն վիճակը առաջուած կը ցըսունեն։ Վաստամբները Տրէօտօր և Նօվի բերդերուն տիրելէն եսքը՝ Քռայինայի առաջը կեցան։ և չէին ցըսուներ որ անկէց անդին երթալու միտք և դիտաւորութիւն ունենան։ Չէթէ միայն ապստամբներուն ու կայսերական զօրաց մէջ մէկ նոր իրար զարնուիլ մը չեղաւ, այլ և ապստամբներուն քանի մը խումբ զօրքը իրենց երկրը գարձան։ բայց ապստամբներուն գլխաւոր ները ասոնց ապսպրեցին որ միշտ պատրաստ գլուխուին որ կանչուած ատեննին առանց ժամանակ անցնելու ժողվարին։ Վարդ այս ճամբան բըռնելուն պատճառը այն էր որ՝ ձայն մը ելաւ մէջերնին։ որպէս թէ բարձրապատիւ Դահիր փաշային ձեռքէն Պօսնայի ընդհանութը կուսակալութիւնը պիտի առնուի, և Շքօտրայի կուսակալ բարձրապատիւ (Օսման փաշային պիտի տրուի։ Պօսնացիները օսմաննեան մեծազօր տէրութենէն ապստամբը լու դիտաւորութիւն մը չունենալով՝ իրենց ասանկ ուաք ելելուն պատճառը իմացընելու համար տէրութեան բարձրագոյն դուռը յատկապէս քանի մը հոգի պատգամաւոր խրկեցին։ Յէ որ յիշաւի անկեղծութեամբ մեծազօր տէրութեան հընաղանդ մնալու միտք ունին նէ՝ շատ չանցնիր, առանց արիւնհեղութեան այս խուսկութիւնս կը խաղաղի։ թէ որ մոքերնին ապստամբութիւն է նէ՝ յիշաւի բանը քիչ մը կ'երկննայ։ արիւնհեղութիւն ալ կրնայ ըլլալ։ բայց վիասը պօսնացիք կը քաշէն։ Երկու տարիէ Եւրոպայի մէջ պատահած դիպուածները բաւական ցըսուցին, որ օրինաւոր իշխանութեան դէմ ելլող պատճամբները քիչ մը ատեն յաջողութիւն գտնեն ալ նէ՝ վերջապէս կը զսպուին, և ըրած ապստամբութիւններուն տուգանքը կը կրեն։ օրինակ իտալացիները, մաճառները, Տրուսիայի լէհերը, սիցիլիացիները, և այլն։

— Ծէքէ գաւառուն կցորդ Ատալիս քաղաքին  
Պէյիւք Ալի Ֆախրէտտին ըսոււծ գիւղին բընա-  
կիչներէն Ալի անուն մէկը մարդ մը խպաննելէն  
ետքը փախէր էր . և հին ունիֆ ջօրաց հարիւրա-  
պետ (Օսման անուն մէկն ալ իր ընկեր սունելով  
գողութիւն և յափշտակութիւն ընելու համարձա-  
կելնուն համար՝ գաղոնի և յայանի կերպով ասոնք  
ձեռք ձգելու ջանք եղած ալ էր նէ , մէկ տեղ մը  
հաստատ բնակութիւն չունենալուն համար դը-  
ռար եղած էր . գիւղէ գիւղ կը պտըուէին , տու-  
գանքի (Ճէրիմէի) պէս ստակ և ուտելիք կ'առ-  
նէին կ'երթային : Վերջապէս երբ որ լսուեցաւ որ  
վերոյիշեալ գիւղը դարձեր եկեր են , Ծէքէ գա-  
ւառի սատիկանութեն գնդապէտ (զապթիէի պէօ-  
լիւկ ալաշի) Հիւսէին աղայն քանի մը գործակալ-  
նելով և զինուորներով գիւղը կ'երթայ , ասոնց  
սունը կը կոխէ . և երկուքն ալ բունելով Ատալիս  
կը խրկէ : Նըկուքն ալ հիմայ հոն բանտն են :

— 1 բագրոսյ նախընթաց Ծերթերուն մէկին  
մէջ ըսինք որ՝ Պաղտատի կողմէրը մէկ ապատամ  
բութեան շարժում մը եղեր է։ Վարիլ 20 ին լուր  
առնուեցաւ որ՝ բոլըր Պաղտատի դաւառը նորէն  
հնազանդութեան տակ մտած է։ և յիշուած շար-  
ժումէն բան չէ մնացած այն երկրին քաղաքական  
և զինուորական կառավարութիւններուն արթուն  
հոդացողութեամբը։ և այս խաղաղութիւնս ալ  
վաստըկուած զէնք ձեռք աւնելու կարօս չեղած։  
Քիւրտերը տեսնելով որ բարձրապատիւ Նամիք  
փաշայն առանց Ժամանակ տալու որ բաներնին  
կարգի դնեն, Իրաքի բանակին զօրքովը վրանին

կ'երթայ . մէկ դիէն ալ բարձրապատիւ ԱՌՈՒՀԱՄԸ  
մէտ ՈՒշխտ փաշայն իր զօքքովը արագութեամբ  
Խարբուդի վրայ կըքալէ , հասկըցան որ երկու ըս-  
պարապետներուն միտքը մէկ է . մէկը մէկ դիէն  
մէկը մէկալ դիէն զիրենք պիտի պաշարեն և բնա-  
ջնջ պիտի ընեն : Եւ իմանալով որ՝ դէմ գնեն նէ-  
յածողութիւն գտնելու ամենելին ակնկալութիւն  
մը չի կայ , առանց կուիւ սկըսելու կը խոնարհին  
և կը հնազանդին : Հնազանդիւ չուզողները որ քիչ-  
ուոր էին , ամեն մէկը մէկ մէկ դի կըքաշուին : Ա-  
սանկ վերջացաւ մէկ ապստամբութիւն մը , որուն  
սկզբնաւորութիւնը երկար քշելու բանի մը պէս  
կը ըցընէր . բայց յիշեալ բարձրաստիճան սպարա-  
պետներուն ճարտար խոհեմութիւնը մէկ արշա-  
ւանքով մը ցրուեց :

— Ընէրսիս քաղաքի Չանաքլը թաղին բնակիչ  
պէտքար Ալի անուն մէկուն կինը մէկ փորէ երեք  
տղայ կը ծնի . երկուքը աղջիկ և մէկը մանչ : Երեքն  
ալ ապրեցան : Կտիկայ խիստ քիչ պատահած դիմու-  
ուած մին է . երեքն երեք տղայ մէկն ծնին ալ  
նէ՝ երեքը մէկն ապրիլը քիչ կ'ըլլայ :

# ΕΡΣΕΡΒΗ ΛΟΓΙΚΗ

ծերու վրայ դրուած է եղեր . ընդարձակ գործարան ունի եղեր . և իրեն սեպհական գետին ունի եղեր : Իրեն սեպհական գետին ունենալը յանցանքի կարգ սեպող մարդոց ժողովքը չի խափանեմ մի : Այն ժողովքին մէջ մէկ ուրիշ մը իրեն արժանաւոր ըլքալը հասկըցնելու համար ըստաւ . 1835 ին զինուորներուն ետեւեն էի զանոնք մեացընելու համար . և առքը սկս սիօնեաններուն և աօմբանիսուներուն կամ իշարեաններուն մէջ մտայ . 1848 ին քաղաքապահ զինուորներուն հակառակ կեցայ . և քաղաքական պանդոկին ( հօտել լու վկաց ) մէջ կարմիր դրոշակը ամենէն առաջ ես անկեցի . աղօւէսի մը չափ խորամանկութիւն ունիմ . ձերմակներն ու կարմիրները ( կառավարութեան կուսակիցներն ու հասարակապետականները ) շատ աղէկ կը ճանչնամ : Վսոր ընթած պատմութիւնները լասելէն եաբբասոր անունը բնարելիներուն ցուցակին մէջ գրը ուեցաւ : Երկու օր եաբբը նայն ժողովքին մէջ Պ

Հադեւ եկեղեցականութենէ ուրացեալ մարդը եկաւ . կրօնից դէմ խօսեցաւ , և ըստ որ՝ մարման ազատութիւն և կրից ազատութիւն տալու է յաղովականները ամէնն ալ շատ հաւանութիւնութիւնն է : Այս երկու անդամի ժողովքին մէջ ասան խօսքեր ըլլալն իմացայ նէ՝ ինձի պարոք սեղից ժողովքնին վերջացըները : Ուրիշ ժողովք մըն ար վերջացուցի . որսիչետեւ կարմիր բազկացներու (խօչախ ) պահապան զօրքի գործ ընող կար հոն : Ոէկն ալ ելքը կըքարողէր որ՝ օրէնսդրաց ժողովըն մէծագոյն մասին տուած վճիռները և որոշ շումները բոլորն ալ անօրէնութիւն են : Ոէկն ար

Ելաւ քարողեց որ արեւը Աստուած է . և այն ։  
Հաւանդօնի ընտրողաց ժողովքին մէջն ալ ընծոյց  
և գետնի տէր եղողներուն դէմ խօսուեցաւ . ա-  
սոր համար այս ժողովքները յթուեցի : Օրէնսդ-  
րաց ժողովցն մեծագոյն մասը կառավարութեան  
բռնած ձամբուն մէջ խոհեմութիւն տեսնելով  
շատ հաւանեցաւ . բայց ձախակողմեանները որ գլ-  
րեթէ ամէնն ալ ընկերական են՝ տհաճութիւն ցը-  
ցուցին : Կըսիչենք որ՝ | ուի Ֆիլքին թագաւո-  
րութենէ իյնալուն մերձաւոր պատճառը՝ Պ . Կի-  
զօյին ասանկ ժողովակները խափանելու համար  
տուած հրամանն էր : Ինկերականները զօրանան-  
նէ՝ Ֆրւանսայի հիմակուան կառավարութիւնն ալ  
շատ ապահով չէ . և ատեն ատեն զօրանալու նը-  
շաններ ալ կըցըցունեն :

Օրինակի համար սա կտորը պատմենք : Պ. Խօ-  
ժէն Այս մատենագրին խափառական հրեայ անունով  
շնչած պատմութեանը վրայ շնչուած թատրոնա-  
կան խաղը մը կը խազային Թռանսայի Ուուէն քա-  
ղաքը : Կառավարութիւնը հրաման ըրաւ որ այն  
խաղը լերջացընեն . ընկերականները ուղբ կոմեցին .  
կառավարութեան հրամանը մոնիկ շնչել ուղեցին .  
Ուուէնի մէջ մէկ ապատամբութեան աղմուկ մը  
ձգեցին . զինուորներ վրանին երթալե մէկտեղ ժող-  
վրված խռովարանները բռնի ցրուել հարկ եղաւ .  
և այս աղմուկին պատճառովը 40 հոգիի մօտ ալ մարդ-  
բռնուեցան և աէրութեան բանուը դրուեցան . որ  
իբրեւ խռովարար դատաստաննին պիտի տեսնլիք և  
պիտի պատժուին : Ուուէնի խռովսւիք ապրիլ 8 ին  
իրիկունը ելաւ , և երկու օր՝ քշեց : Ապրիլ 14 ին Փա-  
րիզու Աէն գաւառին ընտրովները առանձապետա-  
կաններու ժողովքին անդամ՝ ըլլալու համար Պ. Խօժէն Այս ընտրուցին . որուն շնչած գրքէն ելած  
բանատեղծութիւն մը Ուուէն քաղաքին խռո-  
վութեանը պատճառ եղած էր : 1848 փետրվարէն  
ի վեր է որ քանի քանի անդամ՝ ընկերականներուն  
ձեռքը առիթ անցաւ . Երտահւ — Ուուէն , ուժի  
Պլան , Քառոն , և այլն , քաղաքական գործոց վրայ  
անցան . Խօժէն Այս ասանկ պաշտօնի մը հասած  
չէր : Այս անդամ ընտրուելուն պատճառ՝ Ուուէ-  
նի խռովութեանէն զատ բան չի կրնար ըլլալ : Իսկէ  
է որ՝ ընկերականները հիմակուց կառավարութեան  
դէմայս Ճամբուլ պատերազմ հրատարակելու մը-  
սած են :

1. Πρωταρχίη ή αυτοκαπιταλισμός είναι η αυτοκαπιταλισμός της ανθρωπότητας στην οποία η ανθρωπότητα παραδίδεται στην ανθρωπότητα. Η ανθρωπότητα είναι η ανθρωπότητα που διατηρεί την ανθρωπότητα στην ανθρωπότητα.

ձգէ , որուն վլայ գրուած ըլլայ , հաստը իսպետութիւն  
կամ միայն բնութիւն :

3. Ո՞ւ որ հաստիակապետութեան անուամբ  
նշանակուած լիճակին թուղթը շատ եղէ նէ՝ հա-  
ստիապետութեան նախագահը ասիկայ ծանու-  
թիւ են առաջ գործեալ առեւնիւնը.

კახეთ იონ საფრაგ ჭილიულის ათეანებ :

4. Յու սրբագրատութիւնը ուղղված ը շատ ըլլան նէ՝ օրէնսդրաց ժողովայն նախագահէ ը ծանուցանէ: Եւ միապետութիւն ուղղված ը լըան նէ՝ 1850 յուլիս ամսյ առաջին կիրակի օրը ընդհանութիւն վիճակը նկէցութիւն ըլլայ սահմանադիր ժողովոյ մը անդամ օրոշելու համար: և ազգին ձեռքի լիակատար իշխանութիւնը այս ժողովոյն ձեռքն ըլլայ:

Նադրոց ժողովքը հաստատուելու օրը :  
Ինչպէս որ կ'երեւի՞ այս երեւելի անձին միաւ-  
քը՝ Պռանսացի մէջ թագաւորական կառավարու-  
թիւնը նորէն հաստատել է . բայց ազգին մէջ հա-  
կառակողներ շատ ունեցաւ . և առաջարկութիւ-  
նըն ալ ժողովը շնորունեց . օրագիրներուն մէջէն  
ալ միայն ի-նին ըստուած օրագիրը ասոր կողմը գըտ-  
նուեցաւ . ուրիշները գրեթէ ամէնն ալ Պ. Ա. Ռ. Պ. ա-  
ռօշ Ժաքլէնը կը դատապարտուեն . բայց դատապար-  
տելուն կերպը հետաքրքրական է : Օրէնսդրաց ժո-  
ղովյն մեծագոյն մասը, և օրագիրներուն խիստ շատն  
ալ կը խստավանին որ՝ 1848 ին շնորուած սահմա-  
նագրական օրէնքները, որոց վեց հիմնած է հիմնակ-  
ուան Պռանսացի կառավարութիւր, շատ պակասուի

ունի . ըսելէ որ՝ հիմակուան կառավարութիւնը  
գէշ հիման վրայ հաստատուած է . բայց կ'ըսեն .  
միապետական կառավարութիւնն ալ . երկու տե-  
սակ է . բացարձակ և սահմանադրական . միապե-  
տութիւն ուղղները ասոնց ո՞րը ուզած պիտի ըլ-  
լան : Անսանը և աստիճանը օրագիրը կ'ըսէ . « Վցը տա-  
կաւին միապետութիւն ընդունելու չափ հասուն  
չէ » : Ասոր ըսելէն կը հետեւի որ՝ ֆռանսընի կա-  
ռավարութիւնը միապետական եղած առենը աւե-  
լի հասուն էր . հիմա որ՝ հասարակապետութեան  
տակ բնկաւ նէ . հասունութիւնը կրոնցուց . նո-  
րէն հասունալուն սպասելու է : Բսելէ որ՝ կեն-  
ցաղական գիտութեան մէջ հասարակապետական  
ները յառաջադիմութեան մէջ եղած ըլլալուն տե-  
ղը՝ ինչպէս որ իրենք զիրենք կը կարծէին , ետ դար-  
ձած են : Կցն օրագիրը կ'ըսէ . տուն պիտի շնեենք  
նէ . հիմը չե գրած տանը յարկը շնելու չափա-  
տինք . որ աշխատութիւնիս պարապ չերթայ :

Երկրորդ խնդիրն էր տպագրութեան, և մաս  
նաւանդ օրիագիլներուն օրէնքը դնելը, որ ամէն  
խելվընուն եկածը չի տպեն, և աղդին մէջ շփոթ  
չի ձգեն: Այս օրէնքսը ընդունել տալու համար Պ.  
Ո՞լէ օրէնսդրաց ժողովցն մէջ իսսուեցաւ. բայց օ-  
րագիլները ամէնը միաբան ասոր դէմ բողոքեցին,  
և օրէնքին ընդունուիլը առ այժմ եւո մնաց:

**ԱԽՄԴԻԱ:** Տալմացիսյի Օակօրի գաւառուն  
գեղական քնակիչները տուբբերնին ծանր գալով  
տէրութեան հրամանին դէմ գլուխոքաշեր էին ան-  
ցածները . և գատատանի ելլելու հրաւերն ալ-  
մտիկ չէին ըրեր . զէնք առեր և հարկահանները  
իրենց մէջն գուրս վալնուեր էին : Բայց երբ որ  
կայսերական վինուսորները եկան և ապատամբու-  
թեան գլխաւորներէն քանի մը հոգի բռնկեցին ,  
մէկալները ամէնն ալ զէնքերնին վար գրին և հնա-  
զանդեցան : Կառավարութիւնը ասոնց ապատամբ  
բիլ լսելով առջի բերանը երկու խումբ զօրք վը-  
րանին խրկել տնօրինեց . բայց հնազանդեցան նէ՝  
զօրքերը ետ կանչել ովեաբ եղաւ . և այս զօրքերուն  
համար եղած ծախքը՝ ապատամբներուն վրայ տու-  
գանք ձգուեցաւ . տուն գլուխ հինգական ֆլորին :  
Դիւղացիները վճարել չուզած տուբբերնին ու այս  
ստակը ամէննը մէկէն վճարեցին քիչ ժամանակի մէջ .  
և հիմա Օակօրի կատարեալ հանդարտած է :

ԳԵՐՄԱՆԻԱ : Երգուրդ քաղաքը մողվաճած գերմանական գանձակցութեան համապային ժողովքը անսանկ ճամբայ մը բոնեց , որ Շրուսիայի թագաւորին ալ հարկ պիտի ըլլայ Աւստրիայի հետ միանալ : Այս ժողովցին երկու երեւելի անդամները , Պ. Պօտէլցուինկ և Պ. Քամբհառուզէն , երկուքն ալ ասկէց առաջ Շրուսիայի թագաւորութեան նախարարութիւն ըրած մարդիկ , իրարուհետ վէճ մը բայցին . մէկը կ'ըսէր որ՝ ահմանադրուկան կանոնները ամէնը մէկէն ընդունուին , ինչպէս որ Շրուսիայի թագաւորը ընդունած և անխախտ սրահելու ալ երդում ըրած էր . միւսը կ'ըսէր որ՝ մէկիկ մէկիկ քննուին : Պ. Բադօվ ասոնց երկուքին ըսածը միաբանելու համար առաջարկեց որ՝ ժողովը երկու զատ զատ քուէարկութեամբ որոշէ ամէնը մէկէն ընդունելը , և ընդունելէն առաջքննելը . և այս երկու որոշումը մի և նոյն ժամանակի մէջ խրկուին կառավարութեան խորհրդագրանը : Ճաղավարդական ասոնքնը Պ. Բադօվին առաջարկութիւնը ընդունած . որովհետեւ ընդունացները 89 հոդի և ընդունողները 125 հոդի գըտնուեցան : Այս առաջարկութիւնը ընդունուիլը՝ Շրջուսիայի տէրութեան նախարարաց ժողովքին պըզտիկութիւն մըն էր . որովհետեւ ասոնց շինած և Շրջուսիայի թագաւորին ընդունել տուած սահմանադրութեանը վրայ էր որ այս վէճը կ'ըլլար և նորէն քննութեան առնութիւն ալ Պ. Բադօվին առաջարկութիւնը ընդունողներուն մտօքը պատշաճ տեսնուած էր . ուստի ասոր վրայ գերմանական համազգային ժողովքին մէջ երկար խօսք եղաւ . առաջ Պ. Ուատօվիչ , ետքը Պ. Վանդայֆէլ խօսեցան և Պ. Բադօվին առաջարկութիւնը մերժեցին : Բայց Պ. Քամբհառուզէն և Պ. Պօտէլցուինկ ընդունած էին . և ասոնք չորսն ալ Շրջուսիայի տէրութեան մեծամեծ նախարարներէն էին :

Ըսկէց աւաշ, երբ որ Հանիօվէր Դրուսիայէն  
զատուելով. Եստրիայի կողմը, կամ աւելի ճիշտ  
Խօսիմք, Առևնիխ քաղաքի եղած պայմանագրուելը  
կողմը անցաւ, որովհետեւ գերմանական դաշնակ-  
ցութեան անդամներուն մէկն էր, և Դրֆուրդի  
ժողովը բարձր Գերմանիան ներկայացուցած պիտի  
ըլլար Դրուսիայի գրութեամբը, ուստի Դրուսիայ

յի թագավառորդ հրաման ըրաւ որ Հաննօվէրի թագաւորին փրայ Երփուրդի ատեանը դատաստան ըլլուի և պէտք եղած վճիռը տրուի : Յայտնի է որ Հաննօվէրի Երփուրդի վճռոյն գլուխ պիտի չկ ծըռէր . Երփուրդ ընդունողները Արուսիսյի հետ , և ընդունողները Հաննօվէրի հետ ըլլալի՛ կուիւ պիտի ելլէ որ վերջը բոլոր Եւրոպա պիտի պլազիի : Երդէն Հաննօվէրի տէրութիր յայտարար թուղթ մը հանեց Հաննօվէրի իշխանութեան բոլոր բնակիչներուն , որ այս բանիս վրայօք Երփուրդի համագայլին ժողովքը ինչ վճռելու ըլլայ նէ՝ ոչինչ և բնաւ չեղածի պէտ պիտի սեակէ . անոր վճիռը բընաւ չի պիտի բնդունի :

Արք որ ռանսաց կառավարութիւնը իմացաւ որ համազգային ժողովքին պատճառով Գերմանիա բոլոր երկու մասն պիտի բաժնուի, և գերմանական միութիւնը պիտի աւրուի, Վիեննա նոտող դեսպան Պ. Անտէմ կոմիսին գիր մը գրեց ռուսաց տէրութեան արտաքին գործոց տեսուչ Պ. Վ. սէլուստ կոմար. որկէց Պէլշիքսյի էնդիբանան ըստւած օրագիրը ուս հաստածը կ'առնէ : « Յիրաւի մայիսի 26 ին (1849) եղած դաշնակցութիւնը ուղղակի 1815 ին հաստատուած պայմանագրութեանց հակառակը չէ, բայց կ'երեւի որ երկուքը մէկ տեղ չեն կրնար կենալ. վասն զի գուարին է իմանալ թէ, երբ որ բուն իսկ գերմանական դաշնակցութեան մէջ զատ նիզակակցութիւն մը կ'ելլէ և բոլը Գերմանիա երկուքի կը բաժնէ, և այնպիսի սկզբունքներով իր գործը կը շխտի՛, որ գերմանական դաշնակցութեանէ դուրս մնացած տէրութեաց մէկն ալ այն սկզբունքները չի ձանչնար, այս

պարագայիններուս մէջ 1815 ին հաստատուած պայս.  
մանները ի՞նչպէս պիտի հաստատ մնան ո՞ւ Պ. Ա. Ե.  
սէլուօտ կոմին այս գրութենէս յայտնի կ'երեւի  
որ՝ ուռուսաց տէրութիւնը Դիերմանիայի մէջ եղած  
երկու կողմէն ալ զոհ չէ. ոչ Ռուսիայի կողմն է  
և ոչ Ա-սդրիայի. այլ 1815 ին գաշնագրութիւնը  
քալիցընել կ'ուզէ. և որ կողմն որ այս գաշնագ-  
րութեան մօտենայ նէ՝ ուռուսին ուղածին մօտեցած  
կ'ըլլայ : 1789 էն Ախնչեւ 1815 բոլոր Եւրոպա ; և  
ծանուցեալ աշխարհքին մէծ մասը տակն ու վլայ  
եղաւ . 1815 ին գաշներով խաղաղեցաւ . և այն  
խաղաղութիւնը տիրեց մինչեւ 1848 : Այն ատե-  
նը ֆուանսըզի կառավարութեան յեղափոխութե-  
նէն եաքը հրատարակուեցաւ որ 1815 ին գաշնակ-  
ցութիւնները հինցած են . ուժ չունին , և խա-  
փանած են . գիտես թէ Եւրոպա խաղաղ բոնող  
կապը փրթաւ : Խաղաղութիւնը նորէն հաստատե-  
լը՝ այն հին և ակարացած կարծուած պայմանները  
հաստատուն և անխափառ բռնելով ըլլալիքը յայտ-  
նի կ'երեւի :

ԹՈՒՍԱՍՏԱՆ : | է հաստանի սահմանը ուռւսաց  
տէրը թիւնը շատ զօքը կը լրցընէ : Գերմանիան ընդ-  
հանուր լրտեած օրագիրը լած ըլլալով կ'ըսէ  
որ այս զօքը հոն պիտի մնան մինչեւ որ Եւսդրի-  
այի մէջ ապստամբութիւն մը ՚էլլէ . որպէս զի ե-  
լածին պէս զսպելու և նուածելու դիւրութիւն  
ըլլաց : Իսյց ասիկայ հաւանական չերեւիր կ'ըսէ  
յիշեալ օրագիրը . որովհետեւ թէ որ չէզօք կե-  
նալու միտք ունի նէ մինչեւ այն ժամանակը զօք-  
քը խիստ շատ են : Ուստի աւելի հաւանական կ'ե-  
րեւի լսելը թէ լոկ սպասելու համար չէ . ընելիք  
բան մը ունի . և ասոր վրայ | է հաստանցիները  
կ'ըսեն եղեր թէ՝ ուռւսաց կայսրը ամէն բանէն ա-  
ռաջ կ'ուզէ որ՝ թէ Գերմանիա և թէ Տանիմառ-  
քա առաջ ինչ վիճակի մէջ էին նէ՝ վերստին նոյն  
վիճակը մտնեն : | չ թէ որ Երուսիսյի կառավա-  
րութիւնը իր զօքքը Ը լէզվիկ - Զօլդայն դքսու-  
թիւններուն երկիրներէն չի հանէ նէ , ուռւսաց  
կայսերական զօքքը սահմանէն անդին պիտի անց-  
նին և Գերմանիայի մէջ կռիւ պիտի բանան , որ-  
պէս զի Տանիմառքայի կռիւը այս կերպով վերջա-  
ցընեն :

ԲՐՈՒՄԻԱ : Գեղրմանիայի Հօհէնցոլլէռն Վիկմա-  
ռիսկէն և Հօհէնցոլլէռն Հէքինկէն ինքնիշխան  
դքսութիւններուն իշխանները իրենց կամաւ ի-  
րենց իշխանութեան երկիրները Տրուսիայի թա-  
գաւորութեանը տուին . և թագաւորը այս երկու  
իշխանութեանց ամեն քաղաքներուն և գիւղաքս-  
ղաքներուն և գիւղերուն կառավարիչներուն շըր-  
ջաբերական գիրեր Խրկեց , որ իրենց երկիրները  
ասկէց ետքը Տրուսիայի կառավարութեան կողմէն  
սահմանադրական կանոններու համեմատ կառավա-  
րեն : Տրուսիայի թագաւորն ալ իրեն տիտղոսնե-  
րուն կամ պատուանուններուն կարգը հրովարտակ

Ներուն մէջ ասոնք ալ պիտի դրուին . կոմս Ոիկմաշ  
ու խնկէնի և Վէհընկէնի . տէր Հակայրօխի և  
Վէհիշդայնի :

Գիտնալ պետք է որ՝ Հօհենցօլիցանի գրառ  
թեան տունէն է Բրուսիայի թագաւորական տու-  
նըն ալ. որովհետեւ ԺԲ. գարուն մէջ Հօհենցօլ-  
իցոնի երկրորդ Որոտղի դուքքալ երկու տղայ ու-  
նէր. մէկը Մրեւոէրիք, որ Սուապի իշխանական  
տանը նախահայր եղաւ, և հիմակուան Հօհեն-  
ցօլիցոնի գուքը այս տունէն էր. և միւսը Քօն-  
ուան, որ Գրամբօնիսայի իշխանական տանը նախա-  
հայրն էր. և 1417 թուբին՝ Պուանտէպուոկի կայս-  
րընտրութիւնն ալ այս տանը անցաւ. և հիմակ-  
ուան Բրուսիայի թագաւորը Պուանտէպուոկի տր-  
նէն ըլլարով՝ Հօհենցօլիցոնի ցեղէն է. Այս Հօ-  
հենցօլիցոնի Հեքինկէն լսուած մասը գրեթէ չըլլա-  
գիէն Առարդէմուէրկի թագաւորութեան տահմա-  
նին մէջ գողուած է. և ինչպէս որ առաջ ըսինք,  
Առարդէմուէրկի կառավարութիւնը Երթուրդի գեր-  
մանական ազգային ժողովոյն պատճառաւ Բրուսի-  
այի հետ աւրուած և Աբսդրիայի հետ միացած է:  
Արկմառնինկէն ալ նմանապէս Առարդէմուէրկի եր-  
կիրներուն մէջ է. միայն հարաւ կողմէն Պատրի-  
քառութեան տահմանակից է. և Հեքինկէնի երկի-  
րը ըստ մասին ասոր մէջէն անցնելով երկու մասն  
բաժնած է. որոց մէկն է բուն Արկմառնինկէն,  
Պատնա գետին վրայ, և միւսն է ԱՀՀըքինկէն:  
Այս աշխարհագրական գիրքս հիմակուան քաղա-  
քական պարտայններուն նայելով՝ կարդացողնեւ-  
րուն խորհրդածութեան արժանի նիւթ մը ըլլա-  
լուն համար հօս նշանակելը պատշաճ սեպեցինք:

ԻՏԱԼԻԱ: Հասարակականգետութեան  
գլուխներէն մէկը, Վածծինի լառուածը, օրուն հա-  
մար ոմանեք տակաւին Օուիցցէրիի մէջ է կ'ըսէն .  
և ոմանք հոն չէ, Խնկիլթէռուա փախած է կ'ըսէն ,  
ինքն ուր ենէ՝ յեղափոխուի արծարծուլ գրուած-  
ները լսու մէծի մասին Օուիցցէրիէն կ'ելլան և  
սահմանակից երկիրները կը տարածուին :

Անշիլիսայի ոստիկանութեն գործակալները մալ-  
թացի Նաւարի անուն մէկու մը ասանկ խռովու-  
թիւն սերմանող շատ մը գրուածներ գտան, և աւ-  
զաննա տպուած. և ամէնն ալ առին. մարդն ալ  
բռնեցին: Եւ օրովհետեւ ասիկայ մալթացի ըլլա-  
լուն համար բնիկ ինկիլիզի տէրութեան հպատակ  
կ'ըլլար, Նաբօլիի տէրութիւնը ասոր համար ինկի-  
լիզի տէրութենէն խնդրեց որ Կապատակները զբա-  
պէ. այդպէս խռովացոց ճամբայ չի բռնեն: Ին-  
կիլիզի կառավարութիւնն ալ Վալթա կղզւայ կու-  
սակալին գրեց որ մալթացիներուն պատուիրէ. տ-  
նանի յանցանքներու մէջ չի գտնուին. թէ որ գրո-  
նուելու ըլլան նէ՝ գիտոցած ըլլան որ ինկիլիզի տէ-  
րութիւնը անոնց պաշտովանութիւն չընէր. պա-  
տիժնին կ'առնեն: Բնիկ սիչիլիացի ըլլալով հանած  
ապատամբութիւննին չի յաջողելուն համար Վալ-  
թա փախչողներուն ալ այս լուրս տրուեցաւ. որ  
այն տէղաց նամակներ գրելով իրենց հայրենա-  
կիցները ապատամբութեան չի գրգռեն. ինկիլիզի  
իշխանութեան երկիր գտնուելնուն վստահելավ  
անպատճիւ կը մնանք չի կարծեն. անոնք ալ պատիժ-  
նին կ'առնեն:

ՀԱՐՈՒՄ : Հառմայու ճիօնակը ըսուած օրագիրը  
ապրիլ 12-ին (մարտի 31) կը գրե . Պիտո թ. . քա-  
հանայապետը այսօր կէս օրէն 4 ժամ ետքը (ժամ  
տասնին) ՀԱՐՈՒՄ : Հառմայեցիք և օտարականիք । ա-  
տերանու պալատին առջեւեի հրապարակը լեցուե-  
լով՝ ուրախութեան աղաղակալ օդը լեցուցին :

ՀԱՐՈՒՄ : Կարօնա մէկը գրեր է որ՝ քահանայա-  
պետին . ՀԱՐՈՒՄ մանելլը՝ ամէնուուն կարծիք ըրածին  
չափ հասարակութեան մէջ ուրախութի չի պատ-  
ճառեց : ԱիՃՃի ազնուական տոհմին պալատին ե-  
տեւի կաղմէն Քաղաքանէ ֆիլմնէ (բեգառու) մըն ալ  
պայթեցաւ . որ թաղին շատ տուներուն ապակի-  
ները կոտրացան, և թաղին բնակիչներուն սիր-  
ուը վախով լեցուեցաւ : Պապին սենեկապետին սե-  
նեակը՝ կրակ ձգող հեղուկներով լեցուն ապակի  
անօթներ գրեր էին . որ ժամանակին իմացուեցաւ  
և վերցուեցաւ . և շատ մը պաշտօնի վրայ եղող  
մարդիկ այս պատճառաւ իրենց պաշտօնէն ձգուե-  
ցան :

Քահանայապետին Հռոմ դարձած օրը Խողովորդեան կողմէն հանդէս մը չեղաւ . օր յառաջքահանայապետը ինքը առանձին հրամանաւ այս հանդէսը արգիլեր էր : Հռոմէն սարբիլ 4ին Փառիզու . վեհիվէլ լազարին գրուած նամակի մը մէջ կը կարդամիք : “Ես տնօրինութիւնը՝ որուն պատ-

Ճառ գլխաւորաբար տեղի ծախք ըրլարի է, ընդ հանրապէս ամենուն հաւանելի եղաւ: Այս մասունք որ պարագայները շատ ծանր են: Վտանգ պատահիլը խիստ մօտ է: օրինաւոր ուրախութիւններուն անդամներելու ժամանակ չէ ո: Քետպանների շնորհին և կրակ ձգող հեղուկները բաւական նշան մըն են որ՝ հասարակաց հանդէս մը ըրլար նէ՝ ծառ նըր անկարգութիւններ կրնային պատճառութիւն: Ըստն բարեկենդանի հանդէսներուն ատենն էր որ՝ Քանի նոյնի իշխանին տղուն Ո՞ու զննեանցի իշխանին կառքին մէջը ծաղկով վարդարուած հրաձիգ գործիքը նետուեցաւ: Մովքը և եղայր մէկեն վիրաւորեցան: Տակաւին խռովարագ հասարակապէտականները Հոմեն որակած չէն:

— Հառմայ եկեղեցւոյ կարդինալներէն մէլլի  
Տ. Քառաջ կածծօլա , բնիկ Ծիաշընցա , բնութեք  
աշխայժ և կրակստ մարդ մը , հասարակապետական  
ներաւն Հառմայու մէջ ուժովցած ատենը ասոնց  
կողմն անցաւ . և Պ. Ստէրպինի փաստաբանին հետ  
ընկեր ըլլալով՝ քահանայապետին աշխարհական իշխանութեանը գէմ շատ բաներ գրեց ժողովրդական  
օրագրին մէջ . և ետքը ինքն իր գլխուն զատ օրակ  
գիր մըն ալ հիմնեց : Եկեղեցական գտնութելուն  
համար՝ եկեղեցական իշխանութեան հրամանաւա-  
սնդ օֆֆիցիօ ըսոււած բանար գրուեցաւ . կերպար  
մը անկէց փախչելով՝ որովհետեւ հառմայեցիները  
ֆուանսըզներուն գէմ գրգռելու կ'աշխատէր , որ  
եկան հասարակապետութիւնը տակն ու վրայ ըրին  
և առաջին կառավարութիւնը հաստատեցին . Փը-  
ռանսըզի վիճուորական կառավարութեան հրամա-  
նաւ նորէն բռնուեցաւ և ասնդ անձէլ բերդքը բան-  
տարկեցաւ : Այս բանապարկեալլ առաջկուց վրան  
ինկիլզի անցագիր (բասարուդ) ունի եղեր . գա-  
տաստանը տեսնուելու օրը բանտէն նորէն փախ-  
չելուն եղանակը գտաւ . և ուզակակի Վալթա գը-  
նաց : Յիշեալ բերդին պահպանութիւնը ֆուան-  
սըզները հոռմայեցիներուն յանձներ էին . և իրենց-  
մէ մարդ գրեր էին միայն գրսի դռներուն քով .  
որ ներսէն դուրս ելլողներուն բան չէին ըսոր . սե-  
պէլով որ ներսինները հաճութիւն ունին : Մրկէց  
առաջ Վ. քիլսի անուն կարգուրաց կրօնաւոր մըն  
ալ նոյն բերդին պահապանները փախցուցեր էին .  
որ այն ալ Վալթա գայցէր էր . ասոր վրայ ֆուան-  
սըզի զինուորական կառավարութիւնը ասնդ անձէլ  
բերդին բանտապահները ամէնն ալ բանտը գրաւ .  
վրանին գատաստանական քննութիւն ընելու հա-  
մար :

ՏԱԽԻՄԱԽԱԲԱ : | Դ-ՆԴՎՅԵՐ օրագիրը Շրուսիայի  
ՔԵԾՈՒ քաղաքի օրագիրէն առնելով կ'ըսէ . « Քօ-  
բէնհակէն առած ամէն լուրերնիս նայելով , թա-  
գաւորին հիւանդութիւնը , որուն անունը տայ-  
ալ չըլլար , ապրելու քիչ մը ժամանակ թողնեցած  
է իրեն : » յս ասանկ ըլլալով՝ հարկաւորապէս բա-  
նը մէկ ուրիշ նոր կերպարանիքի մը կը մտնէ . քան-  
զի յայտնի է որ՝ Տանիմառքսյի թագաւորութեան  
ժառանգ իշխանը հիմակուան նախարարներուն  
հետ միաբան չէ , և անոնց խորհուրդը ընդունած  
չէ . և թագաւորութեան վէճի տակ եղած մասեւ-  
րուն վրայօք գերմանական դաշնակցութեան ըսա-  
ծին հաճութիւն չի տայ ալ նէ՝ մինչեւ հիմա բըռ-  
նուած Տանիմառքսյի քաղաքականութեան ընթաց-  
քը հարկաւ ուրիշ կերպի կը փոխուի :

ՆԱԲՈԼԻ : Հայաստան լրագրոյս ապրիլ 10 հըստ  
տարակուած թուին մէջ՝ Կաբօլիի հասարակու-  
թեան սահմանադրական կառավարութի չուզելու  
համար աղերսադիր տալը պատմելէն ետքը՝ “Կը-  
վի ըսինք, որ այս աղերսադրիս ստորագրութիւն  
ժողվելու համար պատրացընողները ոստիկանութե-  
մարդիկն են ու կը յս համբաւը սուտ և յեղափո-  
խութեան կուսակիցներուն հնարածը ըլլալը՝ Կա-  
բօլիի թէմբօ ըսուած օրագիրը վաւերական կերպով  
կը հաստատէ։ Յեղափոխականներուն օրագիրնե-  
րը միայն այն աղերսադիրը ոստիկանութեան մազ-  
դիկ կը պատրացընեն ըսելով չեն անցնիր։ Ստորագ-  
րութիւն չի տուող պաշտօնատէրները պաշտօնէ կը  
հանուին կ'ըսեն։ զօրքը սուին (սիւնկիւ) ցըցու-  
նելով և վախցունելով ստորագրութիւն կը ժող-  
վին կ'ըսեն։ և այն։ Յիշեւալ օրագրին հրատարա-  
կիչը որ Կաբօլի քաղաքը կը բնակի, կ'ըսէ թէ մենք  
այդպէս աղերսադիր ստորագրած չեմք։ որովհե-  
տեւ ստորագրութիւն ուզող ալ չէ եղած։ և երբ  
դրսի լրագիրերէ իմացանք որ քաղաքիս մէջ ասանկ  
քան մը կայ եղեք, ետեւէ ինկանք ստորգելու։ ո-  
րովհետեւ մինչեւ այն ատենը բանէ մըն ալ տե-

Եւ կութիւն չունենք : Ամբողջ գիւղեր և վիճակներ՝ գտառաւարական նօսարներու առաջ գացեր այս ազերսագիրը գրել առւեր և ստորագրեր են որոց համբանքը 2283 հոգի է եղեր . և սկզբնաւորութիւնը անցյալ ալ օգոստոսէն է եղեր : Ամէն առաջ ստորագրուղներն են Վայրուցյօի բնակիչները ոգ սստառ 43 ին . սեպտեմբերի մէջ ստորագրեր են Քաբէիւանադայի բնակիչները . հոկտեմբերի մէջ ալ Դէռաւա տի և ավուցի և Պաղելիքադայի մարգիկը : Ասել է որ՝ սկզբնաւորութիւնըն ալ Նարօլիկէն չէ , գուրսէն եղեր է : Հասմարդիկ նոյն իսկ քաղաքին մէջ՝ ազերսագրին ստորագրած չըլլալով ալ՝ մօտ օրերս նոր պաշտօնի և մեծութեան հասած են , և ասից յայսնի է որ կառավարութիւնը այս բանին բնաւ հաղորդ չէ բաւն սրամձառը այն գործ ականներն են որ՝ սահմանադրական օրէնք պատճառելով երկարառակառ թեան և ապասամբութեան ոգի կը սերմանեն . որով սահմանադրական օրէնքը պինտ առաջ աւրողը իրենք կը լլան : Վանք թէ Ֆօ օրագրին ըստածներն են : Վանքի ֆուդի օրագրիը , որ հասարակօրէն ազէկ աեղեկութեամբ կը գրէ , կը լսէ որ , թէ աէտ Այրօլի ժաղովսւրդը սահմանադրական կառավարութենէն գոհ չըլլալով իրենց առաջնորդն են բացառ բարձական կառավարութիւնը . անկախ կառավարութիւնը միաբը դրած է որ իդալիս կատարելապէս խաղաղելին ետքը սահմանադրական կառավարութեան ձամբան բռնէ : Վախիս տմէնէն աւելի յայսնի կը ցըցունէ որ թագաւորը կամ կառավարութիւնը այն ազերսագրին հաղորդ չէ :

ՍԱՌԻՏԵՒՄԻԱ : Թառոյն և ՇԵՆՊՈՎՈ քաղաքներուն  
մէջ հասարակութեան կողմէն աղմուկ մը ելլցով  
ասպիլ 8ին, կատավարութեան մարդիկ այս խռո  
վարարներուն գլխաւորներէն քառասուն հոգիի  
մը չոփնեցին բանալ գրին . սակայն կ'երեւել  
որ այս խռովութեանն պատճառ եղած բանը ու-  
րիշ ծանր հետեւանքներ ալ պիտի ունենայ : Եւ  
պատճառը այս է :

Սալուցցօքի եպիսկոպոսը վետրվար ամսոյ մէջ շրջաբերական մը հանած էր . որուն մէջ կրօնից դէմ համարձակ խօսողքանի մը օրագիրներ և ուրիշ գրուածքներ պահարակելով ժողովութքը անոնք չի կարդալու կըյորդորէր . և կառավարութեանն ալ մէկ նախատինք մը կը ցըցլնէր որ ասանկ խօսողները չի զափեր . թէպէտ կառավարութե դէմ խօսածը շատ մեջմ էր : Այս բանս կառավարութիւնիցաւ . եպիսկոպոսը թուռնին կանչել տուաւ . անոր ալ պատուիրեց , անոր վիճակը գտնուողքարով զիշներուն ալ գիր գրեց որ շրջաբերականը կարդան ալ նէ՝ կառավարութեան դէմ եղած կնորը հանեն և անանկ կարդան : Եպիսկոպոսը իր գրածը արգարացընելու ջանալուն համար թողարկութիւն որ իր վիճակը երթայ . բայց քարագիշներն ալ կառավարութեան կողմէն գայած հրամանին պատասխան տուին որ՝ եկեղեցական նիւթաց վերաբերել բաներուն մէջ եպիսկոպոսին հրամանին հնարանգելու պարտական եմք : Կառավարութեան ծանր եկած և վերցընելու զած խօսքն եր այս . «Ո՞ւր մեղացը համոր մեր խեղձ հայրենիքը ուրիշ ազգաց առաջը նախատելի և ամօօթով եղաւ » :

Արդարութեան և կրօնական գործոց տեսաւը  
Պ. ՏՎԴԵԼԻ Սկզբանակի, Ապլուցցօյի և պիտկոսոյ-

պէս զի կրօնասէր բաղմութեան մէջ աղմուկ և շը-  
փոթ չէլլէ:

Պետրվար Տօնիս և ամսաբարներուն ժողովքը այս  
օրէնքը ընդունեց . Եաբը ծերակուտախն առեանին  
ալ առաջարկուեցաւ . Հոն ալ ընդունուելէն ետ-  
քը թագաւորն ալ ապրիլ 9 թուականով օրէնքը  
հրատարակեց . սրուն 6 երրորդ յօդուածովը կը պա-  
տուիրէ որ, յանցաւոր մը թէ որ եկեղեցին կամ  
ուրիշ արթազան տեղ մը փախչելու ապաստանելու-  
ըլլայ նէ՝ զինուորները Հոն ալ մասնեն բռնի , և յան-  
ցաւորը անկէց դուրս առնեն :

Օւերակոյտը երբ որ այս օրէնքը ընդունեց և  
դուրսը լուռեցաւ, որսվէեաւ ամէնն ալ գիտէին  
որ այն օրէնքը հաստատուն է, խել մը բազմու-  
թիւն դուրս ինկան, “կեցցէ Ալքքառտեան օրէն-  
քը, քահանայները չեմք ուզեր ո պօռալ սկզբան։  
Վզդային պահապան զօրքը ժողվելով այս բազմու-  
թիւնը ցրուելու ժամանակ չի կար. քաղաքապահ  
և ծիաւոր զօրքերը եկան. խօսքավ չի կրցան, ցըս  
ուել. քանի երթար կը շատնար. քաղաքին արքե-  
պիսկոսիամին պալատին առաջն ալ խել մը մարդ  
գնաց նցն աղաղակները ընելու։ Օ ինու որներուն  
հարկ եղաւ գէնք գործածել. և ասով հազիւ հազ  
ցրուեցան. բայց բարեբաղբաբար մնդր չի վիրա-  
ւորուեցաւ։ Եցնպէս խռովութիւն մըն ալ Ճէնօ-  
վա ելաւ. ասոնք ալ ցրուելու համար զօրք գալ  
պէտք եղաւ. ցրուեցան. բայց այն իրիկունը շա-  
տերը մեծահանգէն օրերը ըրածնուն պէս տուներ-  
նուն պատուհանները կանթեզով զարդարեցին։

Այս օրենքը հրատարակուելուն և վճռուելուն  
վրայ Հասմայու կառավարութեան կողմէն թու-  
աբն նստալ գետպանը անցադիրները ու զեց, և ան-  
միջապէս քաղաքէն ելաւ : Սատահնիայի տէրու-  
թեան կողմէն Ա իենան և Փարփակ կեցող գետպան-  
ներն ալ ասանկ օրենք վճռող կառավարութեան  
գործոյն մեջ գտնուիլ շուզելով հրատարականին  
գրեցին :

# ОГЛАВЛЕНИЕ

Ո՞ւժազօր տէրութե՛ք սորձրագոյն դրամնը թարդ-  
մաննելուն հմտագոյն անձանց մէկը , հայագիր  
Օմիւռնիացի Վարուեան մեծարոյ Սահակ աղայն  
տաճկերէն թարգմանած է երկու պատմութեան  
գիրքեր . որոց մէկն է Ըուետի Կարոլոս ՖԲ. թա-  
գաւորին պատմութիւնը , և միւր՝ ռուսաց մեծն  
Պետրոս Ա. թագաւորին պատմութիւնը : Այ-  
ս երկու պատմութիւններս իրարմով կը հասկցուին .  
որովհետեւ երկու թագաւոր իրարու ժամանա-  
կակից և ասհմանակից և թշնամի էին . և Ըուե-  
տի թագաւորը երկար ատեն ռուսաց զօրացը վրայ  
յաղթող հանդիսանալէն ետքը երբ որ վերջապէս  
յաղթուեցաւ մէ 1809 ին Բուլղարայի պատերազ-  
մին , մեծազօր օսմաննեան տէրութեան երկիրը ա-  
պատճեցաւ . և հինգ տարի հոն կենալէն ետքը  
1714 ին իւր երկիրը դարձաւ . և չորս տարի թո-  
փառականի պէս ու պատճելէն ետքը 1718 ին Ֆրիտե-  
րիեշտալ ամրոցին մէջ կապարեայ գնասակով վարնը  
մելով մեռաւ : Այս երկու պատմութիւններն ուն-  
հետաքրքրական գիրքեր ըլլալով , բարեգութիւնը  
նակալ կացուը հաճեցաւ որ ասոնց տաճկական  
թարգմանութիւնը իւր անուանը նուիրակի . և  
Վարուեան Սահակ աղայնն այս աշխատաւթիւնը ի-  
րեն ընդունելի ըլլալը ծանուցանելու համար բարձ-  
րագոյն դրան երկրորդ կարգի պաշտօնատարաց կր-  
րած պատուաց նշանին նման ականազարդ նշան մը  
շնորհեղ :

# ՕՐԱԿԱՐԳԱՒ

ՀԱՅՈՒԹԵՐԻ  
ԽՈՎՃԵՐԻ

ՊԵՐՎԱՅԻ ՅՆԴԱՆԻ.

Quesnay's

# ԿՈՍԵՆԴՆՈՒՊՈՒՐ

## Ի ՊԱՐԱԿԱ ՅՈՎՀԱՆՆՈՒ ՄԻՒՀԵՆՏԻՍԱՆ